Ռուզաննա Մանուչարյան

Ռուզաննան խաղում է «Բոհեմ» թատրոնում, նկարահանվում՝ հեռուստատեսային նախագծերում, ֆիլմերում:

Վիկտորիան 3 ամսական էր, երբ մայրիկը սկսեց աշխատել: Այժմ 11 ամսական է, մայրիկի հետ հաճախ է թատրոնում ու նկարահանման հրապարակում լինում:

«Ամենաածանրը կրծքով կերակրվող երեխայից հեռու լինելն էր: Սկզբում անչափ նեղվում էի, ինձ մեղավոր էի զգում, թեպետ ամենաշատը 3 ժամով էի թողնում, հետո վազելով տուն էի գալիս, կերակրում ու նորից աշխատանքի գնում»:

«Շատ էի կարոտում փոքրիկիս: Աշխատանքից հետո գրկում էի, խաղում, ամբողջ գիշեր էլ իրար գրկած էինք քնում, կարոտն այդպես էինք առնում»:

«Մի նախագծում էինք նկարահանվում ես ու ամուսինս: Այդ օրը նկարահանումը նախատեսվածից երկար էր տևում, ամուսնուս խնդրեցի Վիկտորիային իր հետ բերել: Ծատ լարված օր էր: Նկարահանման հրապարակում պետք է լռություն լիներ, իսկ 7 ամսական երեխային չես կարող բացատրել, որ չպետք է ծիծաղել, չպետք է լացել կամ խաղալ:

…Բոլորը կողքից զբաղեցնում էին՝ գրիմ անողը, ռեժիսորի օգնականը, հնչյունային, լույսի օպերատորները, անընդհատ ընդմիջվում էր, ես էլ լարվում էի, մոռանում տեքստս: Դու հասկանում ես, որ բալիկդ խանգարում է, բայց այլ տարբերակ պարզապես չունես»:

«Այն պահերին, երբ իսկապես հոգնած ես, ուղեղդ լարված է, մտածում ես՝ ոնց անես, որ ամեն ինչ հասցնես՝ սնվելը, հագուստը, աշխատանքը… և ասում ես՝ գուցե ես էլ նստեի տանը, երեխային պահեի: Բայց հետո հասկանում ես՝ չէ՛, մաման պետք է կայացած լինի: Կայացած ծնողների երեխաներն ավելի նպատակասլաց են լինում ու առաջ գնում կյանքում՝ տեսնելով ծնողների օրինակը»:

«Առաջիկայում հյուրախաղերի եմ մեկնելու և ես ինքս եմ որոշել, որ երեխայիս ինձ հետ չեմ տանելու: Դերասանուհու աշխատանքը այն եզակի մասնագիտություններից է, որը լիարժեք կենտրոնացում է պահանջում. երբ կենցաղը խառնվում է աշխատանքին, քո կերպարն արդեն վստահություն չի ներշնչում, քո կերպարին չեն հավատում»:



«Կյանքը հեշտ բան չէ, այո,՝ պետք է նաև կարոտեն ծնողին, պետք է հասկանան՝ ինչ է նշանակում գումար վաստակելը, քրտինքով վաստակած գումարը ծախսելը: Առաջին հերթին հենց երեխաների համար ենք անում, բայց նաև մեզ համար ենք անում»:



«Ամեն ինչ կնոջ ձեռքում է: Դժվար է, բայց կինը կարող է ճիշտ պլանավորել օրը, որ չտուժի ո՛չ աշխատանքը, ո՛չ ընտանիքը»:

«Գիտեմ, դժվար է, բայց լուծումը միշտ կա: Թող չվախենան, թող դայակի օգնությանը դիմեն, եթե օգնող չունեն»:

«Եթե այս փոքրիկներին կյանք են տվել, մնացած դժվարությունները մանրուքներ են»:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Ֆոտոպատմությունը պատրաստվել է «Հարմարավետ միջավայր վաղ մայրության շրջանում գտնվող կանանց համար» արշավի ծրագրի շրջանակում: Այն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ կողմից տրամադրված ենթադրամաշնորհային միջոցներով՝ «Կետ 33» հասարակական կազմակերպության կողմից:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Կետ 33» ՀԿ-ը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: